Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի N1 միջն. դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի (6 դասաժամ), ՆԶՊ-ի (11 դասաժամ), տեխնոլոգիա (12 դասաժամ), մաթեմատիկա (16 դասաժամ) ուսուցչի և 3 դասվարների (18, 18, 16 դասաժամեր) թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում է՝

1) դիմում (Ձեւ 1),

2) բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձնագիր,

4) աշխատանքային գրքույկ,

5) ինքնակենսագրություն (Ձեւ 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),

10) որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2020թ. հոկտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00–ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 8-ին՝ ժամը 12:00-ին, Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի N1 միջնակարգ դպրոցում:

Հասցեն Գեղարքունիքի մարզ, գյուղ Ներքին Գետաշեն, 2-րդ փողոց 4-րդ շենք, հեռախոս 094263486, էլեկտրոնային հասցե ngetmij1@gmail.com